

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕԶԱՃԵԱՆ

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ իր ցաւակցութիւնները հեռագրաւ հաղորդեց Մարսիլիոյ շրջանի Հայց. Եկեղեցւոյ Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Գեր. Տ. Տարօն Եպս. Ճերէնեանին, եկեղեցական եւ ազգային բազում նախաձեռնութեանց քաջալեր եւ զօրավիգ հանդիսացող Հայաստանեայց եկեղեցւոյ նախաձեռնութեան Վարուժան Պօզանեանի մահուան առիթով: Եկեղեցասէր եւ քարեգործ Վարուժան Պօզանեան Երուսաղէմի Ս. Աթոռոյս քարերարներէն է, եւ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեանց առիթով, Յիսուսի Ս. Գերեզմանին դիմաց, Հայկական բաժնի մէջ, Աստուածամօր յուշաքանդան վայրին մօտիկ Հայկական Ս. Սեղանին քարերար նուիրատուն է:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր առաքած ցաւակցական հեռագրին ի պատասխան, Վարուժան Պօզանեանի քարեկրօն դուստրը, Օր. Վալէրի Պօզանեան, իր եւ ընտանիքին անունով յայտնած է իրենց երախտագէտ շնորհակալութիւնը: «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

4 Նոյ. 1993

Տարօն Եպս. Ճերէնեան

Երուսաղէմի Ս. Աթոռոյս եւս քարերար Վարուժան Պօզանեանի մահուան առիթով Մեր եւ Մեր Միաբանութեան ցաւակցութիւնները կը յայտնենք Պօզանեան ընտանիքի բոլոր անդամներուն, աղօթելով որ անոր Հայու հոգիին շնորհները եւ առաքինութիւնները շարունակեն քարի պտուղ տալ Պօզանեան գերդաստանի շնորհալի զաւակներուն միջոցաւ: Սուրբ Հոգիին շնորհն ու մխիթարութիւնը կը հայցենք ձեզ եւ Մեր Եկեղեցւոյ բոլոր զաւակներուն համար, զանոնք հոգեռանդն եւ գործունեայ պահելու մաղթանքով:

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ